«Աղբար, քիչ մըն ալ ժողովրդին մտածելու է»...

* * *

Քաղաքացի Մարկոս աղան եկաւ, գնաց, այցելեց Լենինականը, բարձրացաւ Սեւանայ լիճը... «Խորհրդային Հայաստան» թերթը ամէն օր տեղեկութիւններ է տալիս: Գրում են նրա տպաւորութիւնների մասին, նրա ծրագիրների, նրա տուած յոյսերի:

Մարկոս աղան ներկայ է գտնւում Գործկոմի նիստերին, ուր շատ լուրջ եւ այս առթիւ չա՜տ գործնական վիճաբանութիւն է տեղի ունենում: Նա անդամ է զանազան մասնաժողովների, օգտւում է պետական ինքնաշարժներից, խառնւում է բոլոր գործերին, ձրի հին կոնեակ է խմում, ճառեր է արտասանում, զեկուցումների կապոցներ է ժողովում, խոստանում է, խոստանում է, խոստանում է:

Երբեմն տրտունջներ են լսւում: Ծեր մի կոմունիստ, նրա հարեւանը, գայրանում է: Այս սրիկան, այս խողը... Խեղճ մի որբեւայրի կին, եկել օգնութիւն է խնդրել, այս չան որդին լկտի առաջարկութիւններ է արել...

Ընչի՛ն բաներ: Գործ, գո՛րծ:

— Մարկոս աղա, Համալսարանի Ֆիզիքական լաբարատորիայի համար անհրաժեշտ են գործիքներ...

— Ցուցա՛կ պատրաստեցէք:

— Մարկոս աղա, դպրոցները ոչ տետրակ ունեն եւ ոչ մատիտ:

— Բոլոր կարիքները գրի առէք:

— Մարկոս աղա, պետական թատրոնը...

— Սանկ չըլլար, մեծ չէնք մը չինելու է, հաշիւները ըրէ՛ք...

— Մարկոս աղա, ճահիճները չորցնելու համար մի քիչ փողի պէտք կայ:

— Քարէս եւ մանրամասն տեղեկութիւններ:

— Մարկոս աղա, տրակտորները անհրաժեշտ են երկրի...

— Զեկուցում մը գրեցէք...

Մի օր էլ Մարկոս աղան վերջապէս որոշում է մեկնել:

Պատրաստում են թղթեր, յանձնարարութիւններ, Զեկայի արտօնութիւններ:

Հողժողկոմը չոյում է իր մօրուքը, ի նշան մեծ յաղթանակի, եւ վազում կայարան: Ծածուկ փսփսում են: Ողջեգրկւում, գլխարկ հանում, սիրալիր խօսքեր ասում:

Հողժողկոմը մտածում է՝ խաբեցի՛:

Մարկոս աղան, թաշկինակը վերջին անգամ շարժում է կոմիսարների առանձնաշնորհեալ վագոնից դուրս, եւ մտածում է՝ աւանակնե՛ր, խաբեցի:

* * *

ՈՐԲԵՐԻ ԳԻՒՂԸ

Ճանապարհը անցանք գրքի նման:

Խոնաւութեան մէջ թաղնած, հին գրքի դեղին էջեր: Կան արատներ ու մգլոտած թղթի վրայ բառեր, բառե՛ր: Զգուշութեամբ բաց ես անում էջը ու աչքերդ վազում են վէպի ետեւից: Անկարելի պատմութիւններ: Ժայռի մօտ, աւրուած դէմքով մի սուրբ է աղօթում, շուրջը՝ փլած կմախքների փշրանքներ: Մի բու՝ ամէն բանաստեղծութիւնների անխուսափելի բուն, ապակիից, ներկուած աչքերով: Դեղին հիւանդութեան նման երակներիդ մէջն է մղտնում անապատը, ու աչքերիդ առջեւ ներկայանում են սայլի վրայ նետուած երախաների մերկ դիակները, ինչպէս տեսել էի մի քանի տարի առաջ, Երեւանի փողոցներից մէկում:

Մեր բոլոր գրքերը ահաւոր են: Թագաւորները երբեմն լոյս եւ ադամանդ են հագնում Արարատի նման, իսկ այստեղ, վարը, օձերը սողում են քամիներով ծեծուած աղքատիկ բոյսերի շուրջը:

Դաշտը փշրել է իր ողմնաչարը, վայր է ընկել երկնքի տակ, հեծում է:

Ձին զարնում է ոտքը գետին եւ գետինը խուլ հնչում է, հսկայ մի գերեզմանաքարի նման: Ձին ցատկում է մի կողմ, վախենում, խրխնջում ու կառքի դլխին երկինքը, անհաստատ անիւների վրայ, երերում է:

Այսպէս, այնտեղ, տառապանքների երկրում, երերում էր մի օր խաչը, եւ ամբողջ տիեզերքն էլ իր հետ:

* *

Եկել ենք Սարդարապատ: Անգլիացի բարեկամս, նախկին ցարական բարձրաստիճան հայ պաշտօնեան եւ ես:

Ինդրե՛մ ծանօթանաք — Որբերի Գիւղի ամերիկեան վարիչը, Քրիստափոր Կոլումբոսը Հայաստանում: Ուրիշ ամերիկացիներ: Դեռ ուրիշներ:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան